ԻՍԿՈՒՀԻ ՆԻԿՈԼԱՅԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 24.07.1982

Ծննդավայր՝ ԼՂԻՄ Մարտակերտի շրջ. գ. Վանք

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Իսկուհի Նիկոլայի Ավանեսյանը** Մարտակերտի շրջ. Վանք գյուղի դպրոցն ավարտելուց հետո, 1999թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի Հումանիտար ֆակուլտետի պատմության բաժինը:

2003-2005 թթ. սովորել է Արցախի պետական համալսարանի մագիստրատուրան՝ «Հայոց պատմություն» մասնագիտությամբ:

2012թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի «Հայոց պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրան, որն ավարտել է 2015թ.:

2016թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Կանանց մասնակցությունը Արցախյան զոյապայքարին (1988–1994 թթ.)» թեմայով:

2020թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Ի. Ավանեսյան 2004-2008 թթ. աշխատել է Արցախի ժողովրդավարական կուսակցության «Հայրենիք» պաշտոնաթերթում՝ որպես թղթակից:

2008թ.աշխատանքի է ընդունվել Արցախի Հանրապետության Ազգային ժողովում՝ որպես «Ժողովրդավարություն» խմբակցության գործավար:

2013-2014 թթ. զբաղեցրել է ԱՀ ԱԺ պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ պաշտոնը:

2014-2015 թթ. աշխատել է ԱՀ ԱԺ քարտուղարության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

2015-2016 թթ. կատարել է ԱՀ ԱԺ նախագահի օգնականի աշխատանքը։

2016-2020 թթ. եղել է ԱՀ ԱԺ «Ժողովրդավարություն» խմբակցության փորձագետ։

2020-2021 թթ.աշխատել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փորձագիտական ծառայությունում՝ որպես առաջատար մասնագետ։

2016 - 2021թթ. ժամավճարային հիմունքներով աշխատել է ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնում։

2019-2023թ. համատեղության կարգով եղել է ՄՄՀ պատմության և կովկասագիտության ամբիոնում ավագ դասախոս։

2021-2023 թթ. զբաղեցրել է ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը։

2023թ. հոկտեմբերի 4-ից՝ մշտական, ապա 2025թ. սեպտեմբերի 1-ից՝ համատեղությամբ աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնում՝ որպես գիտաշխատող։

2023թ. նոյեմբերից համատեղությամբ ՀՊՏՀ Հասարակագիտության ամբիոնի դոցենտ է։

2025թ. թվականից զբաղեցնում է ՀՊՏՀ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը։

Ի. Ավանեսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Լեռնային Ղարաբաղը ռուսական կայսրության շրջան, Արցախի ազգային-ազատագրական պատերազմ, Ադրբեջանի հանցագործությունները Արցախում, ԼՂԻՄ–ի պատմություն և այլն։

Ի. Ավանեսյանը հեղինակ է մեկ մենագրության , մեկ ծրագրի և ավելի քան 34 գիտական հոդվածների, որից՝ 2 ընդգրկված են Scopus/Webofscience (Q 1, 2025-2026) ՄԳԾ-ում։

Ի. Ավանեսյանը գիտական զեկուցումներով, ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մոտ երկու տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում։

Ի. Ավանեսյանը կուսակցական չէ, ամուսնացած չէ։

ORCID https://orcid.org/0009-0005-2491-5058